ՄԻԱԿ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Որքան էլ փարօրինակ է՝ իր կոմերիտական տոմսը Հովիկ Հակոբյանն ստացել է ազգային զարթոնքի 2-րդ տարում 1989 թվին։ Եվ հիմա մտածում ես. եթե այդ անփառունակ կազմակերպությունն արդեն լուծարված լիներ. ինչպե՞ս էր մեզ հասնելու Հովիկի այս միակ հիշատակ-լուսանկարը։ Դեռ 15-ամյա է՝ նոր-նոր հայրենասիրական հովերով խանդավառված. դեռ չի էլ պատկերացնում. որ դպրոցն ավարտելուց հետո կամավոր մեկնելու է Արցախ՝ հայոց բռնազավթված տարածքները ազատագրելու համար։

1993-ի փետրվարի 7-ին նա ծննդավայրում էր՝ Վարդենիսի շրջանի Ծովակ գյուղում։ Կարծես ներքին մի ձայն նրան թելադրել էր այցելել հարազատներին. լինել ծանոթ վայրերում։ Կատակում էր մտերիմների հետ. պատմում Ֆիզուլու ճակատի մասին. խոսում արցախցիների աներեւակայելի վճռականության եւ Հայաստանից նրանց օգնելու մեկնած կամավորների քաջության մասին։ Երբ ընկերներին հրաժեշտ տվեց ու վերադարձավ Արցախ. ոչ ոք չէր կասկածում. որ ընդամենը երեկոյան լսելու է նրա զոհվելու բոթը։

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ